№ 81 Մայիսի 16 (28) 1880 Մայիսի 16 (28) № 81

ԻՆՆԵԲՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի մամուլը։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի Դումայի նիստը։ Նամակ Բաքուից։ Նամակ Ղարսից։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ալբանիայի դրութիւնը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

«Քահանան տես՝ ծուխը ճանաչիր» ասում է ռուսաց առածը։ Խմբագիրներին նայիր՝ կարդացողներին ճանաչիր, կասենք մենք, դարձնելով մեր հայեացքը Կ. Պոլսի հայ լրագրութեան գործին և ուղղութեան։ Հեռուից չը խօսենք, դիմենք փաստերին։

Այսօր Կ. Պոլսի ազգային ժողովը դնում է ատեանի վրա մի կարևոր հարց, որ պիտի վճռէ ընդհանուր դատողութիւնների օգնութեամբ. տեսած կա՞ք երբ և իցէ, որ այն տեղի հայ մամուլը ընկնի այդ հարցի ետևից և կանխապէս յայտնելով իր կարծիքը նորա նշանակութեան և էական կէտերի վրա, այնչափ ժողովրդականացնէ նորան, որ հէնց մի քանիները սովորեն մասնակցել, զբաղվել և ապրել կենսական ազգային շահերով, փոխանակ Վէլի-Էֆենդի անց.քը, մի սէրայլի ինտրիգա, մի բոլգարական հարց, մի ալբանական խնդիր, որոնցով զբաղված է գրեթէ միայն և եթէ Կ. Պոլսի հայ լրագրութիւնը։

Վաղը նոյն ազգային ժողովը, երկար ու բարակ պոռոտախօսութիւններից յետ, թողնում է անվճիռ մի հարկաւոր խնդիր և ցրվում է տները առանց մտադրվելու միւս անգամ վերադառնալ նոյն հարցին։ տեսած կա՞ք որ մի հասարակական օրգան բողոքէ ժողովի այդպիսի թուլութեան դէմ և իր մտաւոր և բարոյական ազդեցութեամբ առաջ մղէ բարձի թող արած հարցի վիճաբանելը և վերջնական լուծումը։

Այսօր հաստատվում են Կ. Պոլսում մի քանի ընկերութիւններ Հայաստանի մէջ ուսումնարաններ բաց անելու համար. կարդացած կաք մի հայ լրագրի մէջ մի հատ կարծիք, մի քննողական խօսք ընկերութիւնների գործունէութեան և պրոգրամմայի մասին, մի իրախուսական հրաւէրք, համերաշխութեան մի փոքրագոյն գրգիռ։ Վաղը գնում է Հայաստան մի խումբ եւրոպացի հնագէտների պատմական հետախուզութիւններ անելու նպատակով. լսած կաք որ մի հայ լրագիր իր առաջնորդող յօդուածներով քիչ թէ շատ լուսաւորէ խուզարկութեան առարկան և դարձնէ հայ ինտելիգէնցիայի ուշադրութիւնը հայասէր եւրոպացիներին օգնելու վրա։

Այսօր ընդհանուր հայկական աշխարհը տրամադրված է, որչափ կարելի է, աւելի տեղեկութիւններ ստանալ զանազան տերութիւններում ապրող իր միարիւնների վրա. կարդացած կաք երբ և իցէ որ Կ Պոլսի մի հայ լրագիր բարեհաճէ յիշել թէ այս ինչ աշխարհում, որ ասվում է Ռումելիա, Ռումինիա և Կովկաս կան հէնց մէկ ու կէս հայեր, որոնք մի տարի առաջ այնպէս էին, բայց այժմ այսպէս, երկու տարի առաջ այնչափ ուսումնարաններ ունէին, իսկ այժմ այսչափ, հինգ տարի առաջ այնչափ էին հետամուտ իրանց ազգային գործերին, իսկ այսօր այսչափ։ Ո՞ր Կ. Պոլսի հայ լրագրութեան մէջ կը տեսնէք համերաշխութեան կապեր կապելու, միմեանց ծանօթացնելու և դէպի բարի նախանձ դրդելու մի փորձ, մի ընթաց.ք։

Ուրեմն ինչ. մենք միայն անգործ մարդիկ ենք, որ մեր երկու խօսքերից մինը տաճկահայերն են, երկու հոգսերից գլխաւորը նոցա հոգսն է. մենք սեփական հոգսեր չունենք, թէ սեփական նիւթեր. մեզ կեանք ու գործունէութիւն չունենք թէ առաջադիմութեան և ինքնաճանաչութեան նշան։ Ինչ պատճառով է անտարբեր դէպի մեզ Կ. Պոլսի հայ մամուլը, որը շատ լաւ գիտէ Ալբանիայում պատահող անց.քերի մանրամասնութիւնը, շատ լաւ է հետաքրքիր Սերբիայի և Բոլգարիայի սահմանագլուխների որոշման, շատ լաւ գիտէ մի որ և է հօջայի կենսագրութիւնը, շատ լաւ գիտէ թէ ով ո՞ր աստիճանի մէջ եղիէ ստացաւ վեհափառ սուլթանից, բայց ոչինչ չը գիտէ մէկ ու կէս միլիոն հայերի մասին, չը գիտէ ի՞նչ ենք շինում մենք այստեղ՝ կոտորված ենք թէ կենդանի, քնած թէ արթուն, սրտացաւ թէ անտարբեր դէպի իրանց վիճակը...

Ու այսպիսով բանը հասնում է այն խայտառակ կէտին, որ երբ նոյն իսկ Հայաստանում յայտնվում է սովը և աղ ու ձախ հարիւրներով հնձում, երբ Կովկասի հայ լրագրութիւնը ամբողջ երկու ամիս առաջ աղաղակ է բարձրացնում, բողոք պատռում, օգնութեան կանչում, միայն երկու ամսից յետ էք տեսնում, որ Կ. Պոլսի լրագիրները յայտնում են թէ «շտէ կրսեն թէ Հայաստան սով կայ»։ Ահա՛ այսպէս է կատարում Կ. Պոլսի հայ լրագրութիւնը պուբլիցիստի բարձր պաշտօնը...

Այդ է երևի պատճառը որ Կ. Պոլսի ազգային ժողովի մէջ դիզվել են միմեանց վրա 57 չը լուծված գործեր, բայց ոչ ոք չէ հարցնում թէ ինչու։ Այդ է պատճառը երևի որ տաճկահայերի, այսպէս ասած, սահմանագրութիւնը 20 տարվայ ընթաց.քում այնչափ կարողացաւ կրթել ժողովուրդը և պատրաստել ինքնավարութեան համար, որչափ Կ. Պոլսի մամուլը ինքն իրան կրթեց...Այդ է պատճառը երևի որ Կ. Պոլսի հայ մամուլը չէ ձևացնում մի ոյժ, մի հասարակական ուղեցոյց, այլ նա նմանում է միայն անդամալոյծ ինվալիդին, որին հարկաւոր է լոկ խղճալ և մի կոպէկ շպրտել առաջը նորա թշուառ գոյութիւնը պահպանելու համար։ Ահա ինչ է Կ. Պոլսի հայ մամուլը, որ այնչափ մեծ համարում ունէ ինքն իր վրա։

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Մայիսի 12-ին, երկուշաբթի օր, քննվեցաւ Թիֆլիսի Դումայի մէջ ձայնաւոր Ա. Թայիրովի ծանուցումն «Մշակի» № 71 առաջնորդող յօդուածի վերաբերութեամբ։

Դումայի դահլիճը լի էր ձայնաւորներով և հասարակութեամբ։ Հասարակութեան մէջ տեղ չը կար կանգնելու անգամ։ Քարտուղարը զեկուցումն արաւ Թայիրովի ծանուցման մասին և կարդաց «Մշակի» յօդուածի ռուսերէն թարգմանութիւնը։ Ձայնաւոր Թայիրով իր ծանուցման մէջ պահանջում էր, որ «Մշակի» յօդուածի մէջ եղած մեղադրանքները քաղաքագլխի և ուպրավայի անդամների դէմ, քննվեն Դումայի մէջ և եթէ յայտնվի, որ ոչ քաղաքագլուխը, ոչ էլ ուպրավայի անդամները կապներ չունեն (և այդ հաստատում է ինքն Թայիրով), ոչ էլ կաշու գործարան ունեն, կամ այդ գործարանը ոչինչ ազդեցութիւն չունի Թիֆլիսի վաճառականի թանգութեան վրա,—այն ժամանակ հերքումն գրվի «Մշակի» դէմ, կամ «Մշակի» խմբագիրը դատի կանչվի։

Որովհետև հարցը վերաբերվում էր քաղաքագլխի և վարչութեան անդամների պատասխանատուութեան, այդ պատճառով պ. Մատինով քաղաքագլուխը և ուպրավայի անդամները թողեցին դահլիճը և նախագահութիւնը ընդունեց ընտրողների առաջին բաժնի մէջ ամենից շատ քուէ ստացած ձայնաւոր Անտոն Ղորղանեան։

Վիճաբանութիւնները խնդրի էութեան վրա սկսվեցան։ Մենք աւելորդ ենք համարում յիշել այստեղ բոլոր ձայնաւորների ասածները մի առ մի, միայն կասենք որ առհասարակ ձայնաւորները բաժանվեցան երկու որոշ կողմերի վրա։ Ոմանք, ինչպէս պ. պ. Էլիմիրզով, Նիկոլաձէ, Ալաղատով, Սուղդուլեանց պահանջում էին նախ վերաքննել խնդիրը, վերաքննել մեղադրանքի ստուգութիւնը կամ անստոյգ լինելը, և այնուհետև տալ քաղաքագլխին հաւատարմութեան կամ անհաւատարմութեան քուէն, միւսները ինչպէս Եւանգուլով, բժիշկ Բօտինեանց, իշխան Ամատունի աւելորդ էին համարում քննել խնդիրը, որ նրանց կարծիքով ոչինչ փաստերի վրա հիմնված չէ և առաջարկում էին ուղղակի անցնել հերթական խնդիրներին։

Աւելորդ չենք համարում յիշել այստեղ որ ձայնաւորներից ոմանք, որոնք, թէև մեղադրում էին լրագրին թէ նա անտեղի զրպարտութիւններ է անում Դումայի դէմ, իրանք էլ չէին կարող զսպել իրանց կրքերը և աշխատում էին անփայել խօսքեր գործ ածելով, վճռել հարցը։ Նիկոլաձէ անդադար կրկնում էր որ «Մշակի» յօդուածը մի անեծք, մի անմիտ դատողութիւն է, իսկ բժիշկ Բօտինեանց հայհոյանքից աւելի ոչինչ չասաց մեր լրագրի յօդուածի մասին։ Զարմանում ենք որ նախագահը չը կանգնեցրեց այդ հայհոյողներին, ասելով նրանց, որ եթէ մեղադրում են մի լրագրական յօդուածի անտեղի խօսքերի համար, ձայնաւորները չը պէտք է իրանք էլ նոյնը անեն։

Պ. Նիկոլաձէ երկար ու բարակ վերացական

քաղաքա-տնտեսային դատողութիւններով ուզեց ապացուցանել թէ վաճառականոցի գների թանգութիւնը և էժանութիւնը չէ կարող կախված լինել պոդրիադներից, կաշու գործարանից և այլն, բայց թէ կապ ունի երկրի ընդհանուր տնտեսական դրութեան հետ: Բայց ոչ ոք չը գտնվեցաւ որ պատասխանի պ. Նիկոլաձէին հետևեալը. եթէ ճշմարիտ մի Ֆունտի գինը 30 կ. արուեստական գինը չէ, ի՞նչպէս է պատահել որ ուպրավան միջոց ունեցաւ «Մշակի» յօդուածի հրատարակման հէնց միւս օրը տակա հրատարակել և մի Ֆունտի գինը 30 կոպէկից յանկարծ իջեցնել 12 կոպէկի: Ուպրավայի ոյժից վեր է խաղալ այսպէս ընդհանուր տնտեսական դրութիւնից առաջացած վաճառականոցի գների հետ. նշանակում է, ուրեմն, որ մինչև «Մշակի» յօդուածի հրատարակելը և մինչև տակայի նշանակելը Թիֆլիսի վաճառականոցի վրա մի գինը արուեստական էր: Այո, մի Ֆունտի գինը որ հասաւ 15 կոպէկի, կարող է՛ արդիւնք լինել ընդհանուր թանգութեան, նոյն գնին կարող էր հասնել միսը և Կովկասեան այլ քաղաքներում, բայց այդ գնից բարձր գինը պէտք է համարվի արուեստական գին, որ մեր կարծիքով առաջ է եկել քաղաքային ինքնավարութեան ղեկավարներից գործված այլ և այլ ղեղծումներից:

Այդ ճշմարտութիւնը ոչ ոք ձայնաւորներից չուզեց պարզել:

Այդպիսով առանց վերաքննելու հարցը, ձայնաւորները կրկնում էին որ դա հաստատ իրողութիւն է որ կաշու գործարանը ոչինչ ներգործութիւն չունի գների բարձրանալու վրա, որ նոյնպէս հաստատ իրողութիւն է որ ոչ քաղաքագլուխը ոչ էլ ուպրավայի անդամները չունեն կապներ,—բայց յանկարծ տեղից վեր է կենում ձայնաւոր իշխ. Զէլօկաև և ասում է որ իրան հաստատ յայտնի է, թէ քաղաքագլուխը վաղուց է արդէն ունի մի կապալ որ վերցրել է Մոսկվայում: Դա կովկասեան զորքին կաշի և կօշիկներ հայթայթելու կապալն է:

Հէնց որ իշխան Զէլօկայեվ ասեց այդ խօսքը, պ. Նիկոլաձէ և միւս ձայնաւորներից ոմանք, որոնք թէև զրպարտութիւն էին համարում «Մշակի» յօդուածը, բայց պահանջում էին վերաքննել մեր լրագրի մեղադրանքները, որպէս զի ուպրավայի և Դումայի վրա դրված բիծը սրբվի,—իսկոյն փոխեցին իրանց խօսքը և յայտնելով թէ խնդիրը բաւական պարզվեցաւ, առաջարկեցին անցնել հերթական հարցերին: Առաջարկվեցաւ և ընդունվեցաւ հետևեալ ձևակերպութիւնը. «Ցաւելով որ ձայնաւոր Թայիրով առաջարկեց իր ծանուցումն, Դուման անցնում է հերթական խնդիրներին:»

Ձայնաւոր Ալադաթով առաջարկեց աւելացնել «և համոզվելով «Մշակի» զրպարտութիւնների մէջ» խօսքը, բայց ի հարկէ Դուման այդ աւելուածը չը կարողացաւ ընդունել, որովհետև վճռեց առանց համոզվելու:

Դուման նստելով և վեր կենալով քուէարկեց հաւատարմութիւն քաղաքագլխին և նրա նախագահութեամբ շարունակեց կրկին ուրիշ գործերի քննութիւնը:

Հասարակութիւնը գլուխը շարժելով դուրս եկաւ Դումայից, բոլորովին չը համոզված որ ուպրաման և քաղաքագլուխը արդար են:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

16 ապրիլի

Կարդալով ձեր պատուական լրագրի մէջ մեր Հայաստանի սովալուկ հայ եղբայրների և քոյրերի դրութեան նկարագրութիւնը, կամեցինք մեր մէջ ընտանեկան ձևով հաւաքել մի փոքրիկ գումար, որով և օգնել մեր հայ կարօտեալներին. Ստորագրութիւն բանալով, ուղարկեցինք և մի քանի ծանօթ ընտանիքներին. նոքա ուրախութեամբ ստորագրելուց յետոյ, այլ և խորհուրդ տեսան, որ այդ ստորագրութիւնը տարածենք, որ գուցէ կարելի լինի մի փոքր գումար հաւաքել: Ցեռնելով այսպիսի մի համակրութիւն մեր բագուաբնակ հայ ընտանիքների կողմից, սկսեցի ստորագրութեան թուղթը ձեռքիս, տնէ 'ի տուն մանգալ, նոյնպէս և եկեղեցւոյ մէջ խնդրել բոլոր հայ ընտանիքներից որ օգնեն: Շնորհակալ եմ տիկին Նատալիա Կրասիլնիկեանցէն, նա կամաւորապէս ինձ օգնեց որը իր ծանօթներին ստորագրել տալով և որը ինձ հետ ընտանիքների տները մանգալով, որոնք օգնեցին իրանց կարողութեան չափ, և այսպէս մի տան օրուայ մէջ հաւաքելով մի հազար և հինգ րուբլի փոխանակեցի պետական բանկի բաժնի հետ և բանկի տոմսակը ընդ նամակաւս ուղարկելով ձեզ, խնդրում եմ չտապել հասուցանել ուր հարկն է օգնելու համար մեր խղճալի ազգակիցներին: Նուիրատուաց ցուցակը նոյնպէս խնդրեմ տպել ձեր պատուական լրագրի մէջ 'ի խրախոյս բոլոր ազգայնոց: Թող ընդունեն իմ խորին շնորհակալութիւնն մեր բագուաբնակ քոյրերը, որոնք չը նայելով այս տարուայ Բագուայ բոլոր գործերի վատ և անխնամ ձեռի դրութեան, յետ չը մնացին այս միջոց ևս, ինչպէս մինչև ցայժմ իրանց առատաձեռն նուիրատուութեամբը օգնել հայ ազգակիցներին:

Անուշ Յովհաննէսեան Ղուկասեանց 20 ր., Նատալիայ Կրասիլնիկեանց 25 ր., Եղիսաբէթ Կրասիլնիկեան 15 ր., Հեղինէ Կրասիլնիկեանց 10 ր., Օրիորդ Մաշայ Ս. Կրասիլնիկեանց 5 ր., Նատալիայ Մադաթեանց 20 ր., Աննման Մադաթեանց 15 ր., Անիչկա Ա. Յոնանեանց 10 ր., Զաւահիր Յոնանեանց 15 ր., Օրիորդ Հռիփսիմէ Յոնանեանց 5 ր., Օրիորդ Մարգարիտ Մադաթեանց 5 ր., Բերաֆիոն Մադաթեանց 5 ր., Սօֆիա Հախումեանց 15 ր., Թագուհի Թումայեանց 15 ր., Օրիորդ Մարգարիտ Թումայեանց 5 ր., Զաւահիր Պատվականեանց 10 ր., Սանդուխտ Միրզաագեանց 10 ր., Մարգարիտ Լալայեան 15 ր., Նազի Բազիրեան 10 ր., Անյայտ ոմն 10 ր., Եղիսաբէթ Սարգսեան 35 ր., Ֆէփրոնէ Ժամհարեան 25 ր., Վարդի Թումայեան 6 ր., Օրիորդ Կատարինէ Թումայեան 2 ր., Օրիորդ Մաշայ Թումայեան 2 ր., Կատարինէ Այվազեան 10 ր., Անուշկայ Աթամալեան 5 ր., Խանում Եարամիշեան 5 ր., Շուշինկայ Դաստաչեան 5 ր., Մարգարիտ Խաչատրեանց 10 ր., Անթառամ Թարվիզով 3 ր., Գայեանէ Կոլմանեանց 3 ր., Նուբար Զէյնալեան 3 ր., Թագուհի Ալանեանց 10 ր., Եւալինա Տէր-Յակովբեանց 10 ր., Մարիամ Մալափեան 3 ր., Սուրուն Սարումեան 5 ր., Ուստի Կիլանցեան 2 ր., Եղիսաբէթ Ղուլիեան 2 ր., Անուշկայ Խանդամիրեան 1 ր., Աբի Բունիաթեան 1 ր., Զամբաղ Լալայեան 10 ր., Մինա Լալայեան 5 ր., Զարվարդ Լալայեան 10 ր., Խաթայի Ղարաբէգեան 3 ր., Գայանէ և Վարսինիկ Եարամիշեան 6 ր., Ն. Մելիք-Դադայեանց 3 ր., Հայուհի ոմն (զզլարցի) 5 ր., Շուշինկայ Եվանգուլեանց 5 ր., Ոսկի Ատամեանց 3 ր., Սոփեայ Ատամեանց 3 ր., Զամբախ Մարդանեանց 3 ր., Զէյնապ Խանում Թաղիեվ (Թուրք) 25 ր., Բալախանըմ Հաջի Զէյրակըզը (Թուրք) 10 ր., Մալակնիսայ Հասրաթ Բէկ կըզը (Թուրք) 1 ր., Խաջկայ Խանում Հաջի Միրզայ կըզը 15 ր., Մալակ Աթամալեան 5 ր., Շուշանիկ 3 ր., Մարիամ Կորջիեանց 1 ր., M. Вартанова 5 р., Սարայ Տէր-Յովհաննէսեան 2 ր., Լիզայ Տէր-Մկրտչեան 5 ր., Թագուհի Պողոսեան 1 ր., Եղիսաբէթ Սափարեան 6 ր., Մարիամ Ներսէսեան 1 ր., Սոնայ Պապովեան 2 ր., Եղիսաբէթ Տէր-Օհանեան 10 ր.' Մարիամ Յովսէփեան 5 ր., Նինայ Պատվականեան 2ր., Եկատերինէ Մալիեան 5 ր., Անիկայ Թումայեան 3 ր., Թագուհի Պապաջանեան 1 ր., Փրուզայ Իւզբաչեան 5 ր., Թաղայ Քոչարեան 1 ր., Ոսկի Աթաբէկեան 1 ր., Եւայ Մանվելեան 3 ր., Մինայ Աբրահամեան 1 ր., Ազիզկիւլ Բազիրեան 1 ր., Մարգարիտ Պարունեան 3 ր., Հիրիքնազ Տէր-Մովսէսեան 1 ր., Մակայ Խանդամիրեան 1 ր., Եղիսաբէթ Գրիգորեան 1 ր., Նատալիայ Պատվականեան 10 ր., Տիկին Խանկալամեան 1 ր., Մարիամ Մակարեան 2 ր., Մարիամ Ղազարեան 3 ր., Անուշկայ Մելիքեան 1 ր., Մինա Մելիքեան 1 ր.. Ղումաշ Բէջանեան 2 ր., Անուշկայ Անանեան 2 ր.. Թագուհի Միրզաագեան 5 ր., Մարգարիտ Շաքարեան 5 ր., Անյայտ ոմն 1 ր., Օվսաննայ Շակիտանեան 1 ր., Անթառամ Փռանգուլեան 1 ր.. Զաւվարտ Առուշանեան 1 ր., Սոնայ Ալէքսանեանց 1 ր., Հռիփսիմէ Զալալեանց 1 ր., Օվսաննայ Սիրեբրակեանց 1 ր., Սառայ Խոսրովեանց 1 ր., Աննայ Թումայեանց 1 ր., Մարթայ Տէր-Գասպարեանց 3 ր. Մարթայ Պապովեան 2 ր., Զաւահիր Պողոսեան 2 ր., Մարգարիտ Աղամալեան 2 ր., Մարգարիտ Սափարեան 1 ր., Եղիսաբէթ Եղիազարեան 1 ր., Բալասան Լալայեան 1 ր., Եղիսաբէթ Շաշիտանեան 1 ր., Օվսաննայ Մանուչարեան 1 ր., Սոնիչկայ Բողդանեան 2 ր., Հռիփսիմէ Սըտեփանեան 1 ր., Աննայ Շահնազարեան 5 ր., Մանուշակ Խանդամիրեանց 4 ր., Կատարինէ Մամիկոնեան 5 ր., Մարիամ Ղազիեանց 3 ր., Наталія Назарбегова 1 р., Մայկոյ Ժամհարեան 10 ր., Աթէլ Բաբայեան 1 ր., Վառվառէ Վիրապեան 1 ր., Զառի Ծատուրեան 1 ր., Մարիամ Մսիրխանեան 40 կ., Մինայ Ղազիեան 1 ր., Սոնայ Տէր-Յովսէփեան 1 ր., Թամար Բալայեան 1 ր., Սոփիայ Ափտեանց 1 ր., Զամբաղ Շակիտանեան 10 ր., Ծաղիկ Ապրէսեան 7 ր., Շողակաթ Մելիքեան 10 ր., Սոփիա Ատամեան 5 ր., Վարդանուշ Լազարեան 1 ր., Մարիամ Գրիգորեան 4ր., Անյայտ ոմն 1 ր., Ալէքսանդր Տէր-Յակովբեանց 5 ր., Հեղինէ Սափարեան 2 ր., Մարիամ Սափարեան 2 ր., Հերիքնազ Բալայեան 1 ր., Ոսկի Մայելեան 2 ր., Սանդուխտ Բալայեան 2 ր., Անուշկայ Բալայեան 1 ր., Զաւահիր Կրասիլնիկեան 1 ր., Սոփիայ Տէր-Իսրայելեան 2 ր., Զաւվարտ և Դրսուն Մարտիրոսեան 1 ր. 20 կ., Անյայտ ոմն 50 կ., Կատին Մելիքեան 5 ր., Մանուշակ Աղամալեան 3 ր., Ольга Петровна 2 р., Софія Канчаровна 1 р., Елизавета Маліевна 1 р., Эмма Орбѣловна 6 р., Юлія Тарвизовна 5 р.. Франциска Власовна 1 р., Екатерина Сѣргіевна 1 р., Աննայ Անտոնեան 6 ր., Մանուշակ Գիրիեան 5 ր., Մարգարիտ Խաչատրեան 1 ր.. Սօնայ Ղազարեան 1 ր., Նարկիզ Ղազարեան 1 ր., Անուշ Շախնազարեան 3 ր., Զառգիլ Ղազարեան 1 ր., Զաւվարտ Իւզբաչեան 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Հերիքնազ Լալայեան 1 ր., Մարիամ Կուզնիցեան 2 ր., Ծաղիկ Կրասիլնիկեան 2 ր., Հռիփսիմէ Դատաչեան 1 ր., Սօֆիայ Դատաչեան 1 ր., Վառվառայ Մարդանեան 1 ր.. Անիչկայ Սերեբրակեան 1 ր., Կատինկայ Վարդապետեան 1 ր., Մարիամ Իւզբաչեան 1 ր., Շողակաթ Իւզբաչեան 1 ր., Գայիանէ Դիլտարեան 4 ր., Մարգարիտ Նաջարեան 5 ր., Սոփիայ Նաջարեան 3 ր., Աննայ Գոռոդեան 3 ր., Սոնայ Աբրահամեան 1 ր., Ս. Ներսէսեան 1 ր., Ս. Սիլիկեան 3 ր., Սարումեան 3 ր., Սարումեան 2 ր., Սանամ Շարաբանտեան 6 ր., Եղիսաբէթ Կաջկաջեան 1 ր., Զաւահիր Տէր-Մեսրոպեան 1 ր., Նինոյ Վարշամեան 1 ր., Մարիամ Կարիշեան 1 ր., Մագաղաթ Բէմարեան 1 ր., Եղիսաբէթ Ստեփանեան 1 ր., Զաւվարտ Ներսէսեան 1 ր., Թագուհի Մելիքեան 3 ր., Զաւահիր Կիլանցեան 2 ր., Համասիւռ Երուսալիմսկի 1 ր., Թագուհի Եգորեան 3 ր., Սոնայ Մելիքեան 1 ր., Մանուշակ Ղազարեան 2 ր., Մարոսեայ Թաթոսեան 1 ր., Անյայտ ոմն 5 ր., Սառայ Դիլտարեան 1 ր., Եղիսաբէթ Նազարեան 3 ր., Եղիսաբէթ Վարդանեան 2 ր., Լիզայ Կորցիեվ 1 ր., Եւայ Շակիտանեան 3 ր., Հերիքնազ Պարոնյեան 1 ր., Օվսաննայ Դիլտարեան 10 ր., Անյայտ ոմն 3 ր., Շուշան Վարշամեան 1 ր., Հռիփսիմէ Ղազարեան 1 ր., Մայկոյ Աւետեան 10 ր., Անյայտ ոմն 1 ր., Մինայ Մելիքեան 1 ր., Աննայ Մալունցեան 1 ր., Մարիամ Թարխանեան 1 ր., Աննման Թարխանեան 1ր., Աննա Վարդանեան 15 ր., Աննա Եակորովնայ 5 ր., Սոփեայ Ղարապէկեան 1 ր., Նատալեայ Ներսէսեան 3 ր., Տիկին Ամիրեանց 5 ր., Թաղադիւ և Զաւահիր 1 ր., Ոսկի Թորոսեան 1 ր., Թագուհի Նազարեան 1 ր., Մագթաղինէ Պապովեան 5 ր., Սանամ Նազարեանց 1 ր., Խանում Խաչդրեան 5 ր., Լիւսին Մայիլեան 1 ր., Սառայ Դիլտարեան 1 ր., Հռիփսիմէ Սանամեան 1 ր., Թագուհի Ալանեան 1 ր., Անյայտ ոմն 1 ր.. Համայիլ Աւշարեան 3 ր., Մարգարիտ Զապարեան 1 ր., Զառափել Տէր-Ստեփանեան 2 ր., Զաւահիր Թառայեան 1 ր., Մարգարիտ Շակալտեան 1 ր., Հռիփսիմէ Առուչեան 1 ր., Մինայ Վաքիլեան 1 ր., Խաթուն Իւզբաչեան 1 ր., Սոնայ Բէկնազարեան 1 ր., Նարկիզ Վարդանեան 1 ր., Անյայտ ոմն 3 ր., Անիկայ Մարգարեան 3 ր., Նինոյ Եաղուբեան 5 ր., Թագուհի Պողոսեան 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Թազախանըմ Բաքիխանով (Թուրք) 5 ր., Նինոյ Վերմիշեան 5 ր., Զառափել Ստեփանեան 1 ր., վեց երեխի համար Մատաթեանց 1 ր. 20 կ., Թագուհի Սահակեան 20 կ., Գիւլնազ Աղնաուրեան 50 կ., Հռիփսիմէ Մարիա և Հայկանուշ 54 կ., Աննա Գերասիմիչ 80 կ., Սառայ Զախարեան 60 կ., Զառվարդ Սապոնչեան 50 կ., Սոնայ Մոսէսեան 50 կ., Զաւահիր Ղազարեան 40 կ., Սոնայ Հասրաթեան 50 կ., Կատին Ոսկանեան 50 կ., Մարիամ Բաբախանեան 40 կ., Մերվարի Սանամեան 40 կ., Դադիայ Մարութեան 50 կ., Եղիսաբէթ Փիրազադեան 50 կ., Թագուհի Պողոսեան և Ոսկի Սարուխանեան 35 կ., Եղիսաբէթ Հախումեան 10 ր., Եղիսաբէթ Կապիտովեան 1 ր., Սանդուխտ Ստեփանեան 50 կ., Սոնայ Բատալեան 40 կ., Անուշ Վարդանեան 50 կ., Սողոմէր Սարգսեան 60 կ., Հռիփսիմէ Բունիաթեան 50 կ., Սառայ Զախարեան 50 կ., Զաւահիր Տէր Յովհաննէսեան 50 կ., Մարիամ Շակետանեան 50 կ., Մարիամ Մելիքեան 40 կ., Անախանում Սարուխանեան 20 կ., Տիկին Տէր-Մարկոսեան 5 ր., Աննայ Տէր Սահակեան 1 ր., Հուլինեայ Ասլանեան 10 ր., Անյայտ ոմանք 5 ր. Գումարն է 1005 ր. 9 կ.:

Անուշ Յովհաննիսեան Ղուկասեանց

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

25 ապրիլի

Երեք օր է, որ անընդհատ անձրևներ են գալիս և հեղեղներ են բարձրանում Ղարսում, փողոցներում սաստիկ ցեխից մարդիկ չատ դժուարաւ անց ու դարձ են անում: Երէկ, 24 ամսիս «Զուխուտ մահլայ» կոչված հայոց թաղում հեղեղը խլեց կտուրից մի տղայի (մօտ 19 տարեկան) և գլորելով պատից ցած՝ քշում էր զառիվայր դէպի գետը. Տղայի մայրը տեսնելով իր ջրատար որդուն, սրտի կսկիծը չը կարողանալով զսպել, ինքն ևս գլորվեցաւ պատից վայր տղայի ետևից իբրև նորան ջրից ազատելու, և ենթարկվեցաւ որդու վիճակին. նոքա ջրի միջին գրկախառնված մի երկու տանիքից վայր գլորվելով, գնում էին դէպի գետը. Անգութ հեղեղը դեռ գետը չը հասցրած, մի քանի մարդ օգնութիւն հասնելով, ազատեցին նոցա խեղդվելուց. միայն ցաւալին այն է, որ պատերից գլորվելու ժամանակ, քիթ ու պռունկները բաւական ջարդվել էին, այնպէս՝ որ խեղճերը թէ երեսների վէրքերից և թէ երկիւղից այժմ անկողնում պառկած են: Նոյն գիշեր պատահեցաւ նմանապէս ևս առաւել մի ցաւալի դէպք մի և նոյն թաղում. անձրևից առաջացած հեղեղը ողողելով միջնաբերդի տակի չերտերը արևմտեան կողմից, յանկարծ պոկ է գալիս մի զարհուրելի քարաժայռ և գլորվելով զառիվայր, ընկնում է մի այրի կնոջ բնակութեան տանիքի վրա, որը իր ահագին տարածութեամբ իսկոյն վայր իջեցնելով միանգամից երկու յարկն էլ, տան կահ ու կարասիքի հետ միասին կպցնում է ներքնայարկի յատակին տարաբաղդ կնոջ բոլոր ընտանիքը, որոնք հինգ հոգի էին: Այս ցաւալի լուրը առաւօտեան վաղ տարածվելով քաղաքում, վրահասաւ բազմութիւնը և ոստիկանութեան կարգադրութեամբ ծակելով փուլեկած տան մի անկիւնը, դուրս կրեցին անշարժելի ժայռի տակից հողը ու քարը և երեք ժամից յետոյ հազիւ կարողացան դուրս հանել խեղճ զոհերին: Առաջ գտնվեցաւ ընտանիքի մայրը՝ կիսակենդան, թշուառ այրին, թէպէտ կիսից վեր տեղատեղ ողջ էր մնացել, այլ վայրի մասերը բոլորովին խորտակված լինելով, անհնար է նորան կենդանի մնալ. իսկ մնացեալ չորս հոգին վաղուց արդէն մեռած էին, որոնցից մինը յիշեալ կնոջ միակ որդին էր, մօտ 20 տարեկան, երկրորդը՝ դեռ երեք ամսվայ պսակած դուստրը, որ տեղական սովորութեան համաձայն վերադարձել էր իր մօր մօտ, տան օրերը միասին անցկացնելու. երրորդը 10 տարեկան և չորրորդը 8 տարեկան աղջիկներ, վերջինները օրիորդաց դպրոցում աշակերտուհի էին:

Ղարսի գեներալ գուբերնատորը անձամբ ներկայ գտնվելով այնտեղ, դիտեց միւս կախ ընկած ժայռերի վտանգաւոր դրութիւնը և հրամայեց պոլիցիականներին, որ չուտով դատարկեն ժայռի տակում գտնվող տները բնակիչներից. Այս երկիւղալի վտանգից ազատ չեն նաև հայոց եկեղեցին ու երկսեռ դպրոցները ևս, ուստի ինչպէս միւս տներում, նոյնպէս և դպրոցներում արգելված է այժմ մուտ գործել առժամանակ մի:

Տեղիս թանգութիւնը օրըստօրէ կրկնապատկվելով, համարեա սովի կերպարանք է ստանում. Ղարսից դէպի արևելք մօտ 25 վերստ հեռաւորութեամբ, Ալէքսանդրապոլից եկող խճուղու վրա գտնված «Գեատիկ Սաթլմիշ» անուն գիւղում բնակվող ալաչկերտցի գաղթականներից մի 10 տարեկան երեխայ, քաղցածութիւնից ստիպված գնացել է դէպի գետը, իբրև կանաչեղէն կամ արմատներ գտնելու, որ ուտէ. խեղճ երեխայն մօտենալով գետի ափերին, յանկարծ գլորվել է նորա մէջ և խեղդվել. մի քանի օրից յետոյ երեխայի դիակը գտել են ձկնորսները:

Օտարական

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

1 մայիսի

Երկու շաբաթ է խարկովէն Նախիջևան անցած, բայց ինձ արդէն ակներև է, որ Նոր-Նախիջևան

մեծ կարօտութիւն ունի ժամանակից ուսումով լաւ բժշկի։ Քաղաքին մէջը կը բնակին երեք բժիշկ. պ. Տիգրանեանը և Կերբեվինը շատ ծերացած են և փոքր գործունէութիւն ունին. մնաց պ. Պերպերեանը, բայց այս բժիշկը առաջինը ցաւագար եմ ասելով՝ շատ սակաւ օգնութիւն կը տայ դիւր ժամանակ, երկրորդ շատ անգամ անօգուտ է իւր դիտութեամբը, երբ հիւանդութիւնը դրսի ցաւերուն վերաբերի (наружныя болѣзни). երբ հարկաւորում է հասարակ ուռոյցքներ ճեղքելու, դա Խարկովէն պրոֆէսօրներ հրաւիրում է՝ երբ այդ գործը կարող էր կատարել իւրաքանչիւր բժիշկ իրենմէն զատ։ Մինչդեռ այն ցաւերը, որոնք այստեղ դժուար է բժշկել, ինչպէս քթի, ականջի և կոկորդի ցաւերը, կը մնան առանց օգնութեան և շատերը զրկվում են ձայներէն, խուլանում են, ինչպէս Ս. քահանային որդին և այլն։

Երրորդը՝ պ. Պերպերեանը...օգնութիւն չէ տալիս այն հիւանդներուն, որոնք փոխվելու ցաւերի տէր են. ինչպէս զօր. Թիֆային ցաւը, չիչակը (оспа), տիֆդեռիթը, պառալիթինան և այլն և այլն....

Չորրորդ պ. Պերպերեանը պարապում է վաճառականութեամբ....

Ահա այս պատճառաւ շատերը խնդրում են ինձ այժմ մնալ Նոր-Նախիջևան, չը հականալով որ ես չեմ կարող և չունիմ ցանկութիւն Խարկովը փոխել Նախիջևանին հետ։

Այս նամակովս ես դիմում եմ հայ բժիշկներուն և հրաւիրում եմ՝ որ նոցմէն մինը կամ երկուսը գան Նոր-Նախիջևան բնակելու համար։

Այս քաղաքի մէջ բժիշկը կարող է ունենալ տարեկան արդիւնք, ինչպէս ես փորձած եմ առաջները քանիցս, երեք հազար մանէթէն մինչև չորս և հինգ հազար համեմատ աշխատութեանը։

Ներկայ ժամանակումս Քիշնեվի առաջնորդէն ուղարկված եպիսկոպոս մի՝ Նոր-Նախիջևանէ և մերձակայ գիւղերէն բաւական փող հաւաքել է առաջնորդի համար տուն կառուցանելու Քիշինեվի մէջը։

Ուսուցչապետ Խարկովի համալսարանի, բժշկապետ Ա. Շլդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրից լսում ենք, որ ինժիներ-տեխնոլոգ պ. Մկրտիչ Կարապետեանը մեծ ուրախութեամբ ընդունելուց յետ Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից արած հրաւէրը՝ Միքայէլեան արհեստանոցի կառավարչի պաշտօնը ընդունելու համար, երեք անգամ դիմում է նամակով Իրան հրաւիրողներին թէ ո՞ր ժամանակից սկսած կարող է վարչութեան պաշտօնի մէջ հաշուել, որ զորա համաձայն հրաժարական ներկայացնէ երկաթուղու կառավարչութեան։ Երկար սպասելուց յետ պ. Կարապետեանը ստանում է մի նոր բարձր պաշտօնի առաջարկութիւն երկաթուղու կառավարչութիւնից, բայց դարձեալ մնում է անխախտ իր մտադրութեան մէջ՝ ծառայել ազգային չահերին, վասնորոյ ամբողջ երեք շաբաթ չէ խոստանում առաջարկած պաշտօնը ընդունելու այն յոյսով, որ վերջապէս Թիֆլիսի հասարակային գործիչները մի պատասխան կը տան և իրանց արած հրաւէրի մասին մի որոշ խօսք կասեն պ. Կարապետեանին։ Դարձեալ չը ստանալով ոչինչ պատասխան, հայազգի ինժիները մի նամակ է ուղղում քաղաքային վարչութեան, որի մէջ յայտնում է իր ցաւակցութիւնը որ չը կարողացաւ այժմ իրան նշանակած եօթը հազար բուբլի ռոճիկի փոխարէն ստանալ երկու հազար, որը նշանակված է Միքայէլեան արհեստանոցի դիրեկտորին, այն պիտիառութեամբ, որ այդպիսի զոհաբերութիւնը նուիրված կը լինէր Թիֆլիսի հասարակութեան օգտին։ Երբ այդ նամակը ևս մնում է առանց պատասխանի, պ. Կարապետեանը ստիպված է լինում ընդունել իրան առաջարկած Բագու-Թիֆլիսեան ամբողջ գծի կառախմբային չինութեան գլխաւորի վերահսկողութիւնը։ Այդ պաշտօնով նա գնաց այս օրերս Բագու տանելով ի հարկէ իր կարծիքը վարչութեան մէջ գտնվող հայ ինտելիգենցիայի վրա։

—

Հաստատ աղբիւրից լսում ենք. որ Գօրու ռուսաց վարժապետական սեմինարիայում, եկող մայիս ամսից սկսած, ուսանելի առարկաների մէջ կը մտցնվի ևս հայոց լեզուի դասաւանդութիւնը։ Իսկ հայոց կրօնագիտութեան ուսուցիչը կը ստանայ նոյնչափ ռոճիկ, որչափ և ուղղափառ կրօնուսուցը։ Այս գովելի նորամուծութիւնը ի հարկէ մի նոր ապացոյց է այն խոհեմ և արդիւնաւոր ընթացքի, որը բռնել է Կովկասի ուսումնական չքրջանի կառավարիչ՝ բոլոր հասարակութիւնից յարգված մեծ. պ. Եանովսկին։ Ասում են, որ պ. Եանովսկու մտցրած փոփոխութիւնը կատարված է նոյն սեմինարիայի մէջ կրօնուսույց Տէր-Ստեփան Տէր-Ստեփանեանին ներկայացրած զեկուցման համեմատ։ Կարծիք չը կայ, որ հայոց լեզուն և հայոց կրօնը հաւասար տեղ և պատիւ պիտի ունենային այդ սեմինարիայի մէջ և պ. Եանովսկուց առաջ, երբ վարժապետական դպրոցի մէջ եղել են և կան բաւականաչափ հայեր։

—

ՇՈՒՇՈՒՅ պ. պ. Բաբաջան և Ասատուր մահտեսի Շահգալդեան եղբայրներից ստացանք 26 ր. յօգուտ Վանի սովատանջների։

—

Վերջին անգամ Վասպուրականի սովատանջներին փող ուղարկելուց յետոյ, մնում էր խմբագրութեան մէջ 497 ր. 39 կ.։ Դրանից յետոյ հաւաքվեցաւ խմբագրութեան մէջ 2297 ր. 90 կ., որ առաջվայ գումարի հետ կանի 2795 ր. 25 կ.։ Այդ գումարից երեկ ուղարկեցինք Կ. Պոլիս, Կիւլպէնկեանի առևտրական տանը 2000 ր., ուրեմն մնում է խմբագրութեան մէջ, հեռագրի ծախսը 3 ր. 29 կ. հանած, 792 ր.։ Ուրեմն փետրվար ամսից մինչև այժմ «Մշակը» ուղարկեց Հայաստանի սովեալների համար ընդամենը 28,000 բուբլ։ Ստորագրութիւնը շարունակվում է։

—

Ներկայ տարվայ յունվար ամսին Կ. Պոլսի «Արարատեան» ընկերութեանը փող ուղարկելուց յետոյ, մնում էր խմբագրութեան մէջ 775 ր. 64 կ.։ Դրանից յետոյ հաւաքվեցաւ մեր խմբագրութեան մէջ յօգուտ նոյն ընկերութեան 2094 ր. 81 կ., որ մնացորդ գումարի հետ անում է 2870 ր. 45 կ.։ Այդ գումարից երեկ ուղարկեցինք Կիւլպէնկեանի առևտրական տանը «Արարատեան» ընկերութեան հասցնելու համար 2000 ր., ուրեմն խմբագրութեան մէջ մնում է դարձեալ 870 ր. 45 կ.։ Ուրեմն 1878 թվի մայիս ամսից մինչև ներկայ 1880 թվի մայիս ամիսը «Մշակի» խմբագրութիւնը ընդամենը ուղարկած է «Արարատեան» ընկերութեանը 15,000 բուբլ։

—

Մայիսի 11-ին ԹԻՖԼԻՍԻ Ալէքսանդրեան ապրում մեր հայ տիկինների մասնաժողովը կատարեց Ալէգրի (վիճակախաղ) յօգուտ Հայաստանի սովատանջների։ Ասում են որ վիճակախաղի արդիւնքը եղաւ 4000 բուբլից աւելի։ Ափսոս որ այն օրը եղանակը անձրևային էր, եթէ ոչ աւելի էլ շատ փող կը հաւաքվեր։

—

Ընթերցողը յիշում է որ «Մշակի» մէջ տպվեցաւ մի նամակ Ալէքսանդրապօլից որ այդ քաղաքում հալածում են հայ-աւետարանականներին։ Այդ լուրը հերքվեցաւ «Մշակի» հետեւեալ համարներից մինի մէջ։ Այժմ մի ալէքսանդրապօլցի հայ-աւետարանական Մարգար Յարութիւնեան խնդրում է մեզ յայտնել, որ հայ-բողոքականներին հալածելու լուրը ստոյգ է և կարող է անուններ տալ հայ-աւետարանականների այն տների, որոնց վրա յարձակումն եղաւ։

—

Վրաց «Դրօէբա» լրագրում կարդում ենք ԹԻՖԼԻՍԻ Մետեխի բերդի ռուսաղաւան եկեղեցու Լօմօուրի քահանայի հրաւէրը նուիրել եկեղեցու գրադարանին այլ և այլ թէ ռուսաց և թէ տեղական լեզուներով կրօնական բովանդակութեան գրքեր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից։

«Նոր մինիստրութիւնը թշնամաբար չի վերաբերվի Թիւրքիային, միայն կը պահանջի, որ նա կատարի իր վրա արած պարտականութիւնները»։ Այս խօսքերը ասել է անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Գրենվիլ Թիւրքաց դեսպանին Լօնդօնում և այս վերջինը շտապել է այդ տեղեկութիւնը յայտնել իր կառավարութեանը։ Յայտնի չէ թէ լորդ Գրենվիլ Թիւրքիայի ի՞նչ պարտականութիւնների մասին է խօսել. արդեօք նա ի նկատի է ունեցել Թիւրքիայի ընդհանուր քաղաքականութիւնը և մասամբ Բերլինի դաշնագրի իրագործելը, թէ Թիւրքիայի դրամական պարտականութիւնները և նրանց տոկոսների վճարելը։ Այսպէս թէ այնպէս Թիւրքիայի այժմեան դրութիւնը բաւական նշանաւոր է։

Թիւրքաց կառավարութիւնը այդ բանը հասկացաւ և շտապեց թղթի վրա այնպէս միջոցներ նկարագրել, որոնց աւելի յարմար գտաւ անգլիական նոր մինիստրութեան բարեհաճութիւնը ստանալու համար։ Օրինակ նա եւրոպական մասնաժողով հրաւիրեց մի օրգանական կանոնադրութիւն քննելու, որ կազմված է եւրոպական Թիւրքիայի նահանգների համար։ Կանոնադրութեան առաջին նախագիծը, որ պէտք է քննի այդ մասնաժողովը, Մակեդոնիային է վերաբերում և շատ նման է Արևելեան Ռումելիայի օրգանական կանոնադրութեանը։ Նահանգը կառավարելու համար կը հրաւիրվի տեղական տարրը։ Մասնաժողովի մէջ ռուսաց ներկայացուցիչ իշխան Ցերետելէվի տեղ կը լինի Սալոնիկի ռուսաց այժմեան հիւպատոս պ. Խիտրովո, որ լաւ ծանօթ է երկրի պէտքերի հետ, այնպէս որ այդ պարոնի ընտրութիւնը շատ աջող է։ Ամենից դժուար է այնպիսի մարդիկ գտնել, որոնք կարողանային գործադրել այդ կանոնադրութիւնը։ Մակեդոնիայի մէջ անկարգութիւնները այն առիճանի են հասել, որ նրանց դէմ ոչինչ իրական միջոցներ չէ կարելի գործադրել։ Այդ նահանգին կարելի է տալ այնպիսի ինքնավարութիւն, ինչպիսին Արևելեան Ռումելիան ունի, բայց Բ. Դուռը, ի հարկէ, չի համաձայնի Մակեդոնիային այդպիսի ինքնավարութիւն տալ։ Այդպիսով դեռ ևս շատ դժուարութիւններ կան և Թիւրքաց կառավարութիւնը անկարող կը լինի Անգլիային այս հարցի վերաբերութեամբ բաւականութիւն տալ։

Զերնոզօրիայի հարցը, որի վճռելը նոյնպէս պահանջում է լորդ Գրենվիլ, նոյնչափ դժուարութիւններ կառաջացնի։ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները այդ հարցի վերաբերութեամբ դիմեցին Բ. Դրանը վճռողական մի շրջաբերականով։ Նրա մէջ ասված է, որ Սավասֆաշայից դեսպաններին տուած պատասխանը բաւականացուցիչ չէ և որ պետութիւնները Բ. Դռնից կարճառօտ պատասխանի են սպասում համաձայն էարդեօք Թիւրքաց կառավարութիւնը նորից զբաւել Թողած նահանգները և նրանց Զերնոզօրիային յանձնել և եթէ Բ. Դուռը այդ գործը շուտ չէ կատարի, պետութիւնները իրանք կիրագործեն Բերլինի դաշնագրի այդ կէտը։ Մինիսարների խորհուրդը երեք ժամ շարունակ քննում էր այդ շրջաբերականը և մի պատասխան պատրաստեց, որի խմբագրութիւնը յանձնեց արտաքին գործերի մինիստրին։ Այդ խմբագրված պատասխանը նորից կը քննվի մինիսարների խորհուրդի մէջ և կառաջարկվի սուլթանին հաստատելու համար։ Առժամանակ մտադրութիւն կայ առաջարկել պետութիւններին, որ նրանք միջազգային մի մասնաժողով նշանակեն այն հանգամանքները քննելու համար, որոնց ժամանակ Թիւրքաց զօրքերը թողել են ալբանական մի քանի նահանգները։ Երբ այդ մասնաժողովը կը ներկայացնի իր զեկուցումը, Բ. Դուռը կը պայմանաւորվի պետութիւնների հետ ապագայ գործունէութեան վերաբերութեամբ։

Ինչ կը վերաբերի Թիւրքիայի պարտատէրերի բաւականացնելուն, Բ. Դուռը այժմ բոլորովին անկարող է։ Թիւրքիայի ֆինանսական գործերը հետզհետէ վատանում են։ Կառավարութիւնը, մաքսային տուրքերը գրաւ դնելով, հազիւ կարողացաւ մի քանի հազար լիրա գտնել։ Նորերումս կառավարութիւնը 20,000 լիրայի համար գրաւ դրեց հողային տուրքերը, որ երբէք չէր արել։

Հեռագրատուների մէջ ծառայողների օրինակը փարչական հիմնարկութիւնների մէջ էլ հետեւողներ գտաւ։ Վարչութիւնների մէջ ծառայողները հաւաքվեցին իրանց աշխատանքները դադարեցնելու համար։ Կառավարութիւնը հազիւ կարողացաւ համոզել նրանց շարունակել իրանց ծառայութիւնը և նրանց ռոճկի հաշուում բաւական նշանաւոր գումար վճարեց։

Այդ բոլոր տարաբաղդութիւնների վրա պէտք է աւելացնել և սովը, որ տիրել է Բրուսայում և Իզմիդում, որտեղ սովից մարդիկ մեռնում են։ Բացի այդ ներքին նահանգների բնակիչները, սովից տանջված, գաղթում են մայրաքաղաքի շրջակաները և տեղացի բնակիչներին նեղացնում են։ Կ. Պոլսի շրջականերում աւազակները խումբերով են թափառում։ Այդ խումբերից մէկը յարձակվել էր Բէյկոս գիւղի վրա, զոյգ զոյգ կապել էր բնակիչներին և բոլոր տները կողոպտել։

Այդ անկարգութիւնները շատ վատ հետեւանքներ կարող են ունենալ։

ԱԼԲԱՆԻԱՅԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է հետեւեալը մայիսի 8-ից։

«Սկուտարիից մի թղթակցից, որ միջոց ունի հաստատ տեղեկութիւններ ստանալու, ստացայ հետեւեալ մանրամասնութիւնները Ալբանիայում կատարվող գործերի մասին։ Ամբողջ հիւսիսային Ալբանիան զինաւորված է և տեղական իշխանութիւնը կորցրել է իր հեղինակութիւնը։ Սկուտարիից ապստամբներին օգնելու համար 1200 մարդ են գնացել և եթէ հարկաւոր լինի, զէնք կրելու ընդունակ բոլոր ազգաբնակութիւնը պատրաստ է օգնել նրանց։ Պոլիցիայի գլխաւորը ուղարկվեցաւ ապստամբների մօտ, բայց նա, պաշտօնական հաղորդութիւնների համեմատ, ուժով բռնվեցաւ ապստամբներից, բայց ամենքին լաւ յայտնի է, որ նա նամակագրութիւն ունէր «ալբանական միութեան» հետ և ապստամբների առաջնորդներից մէկը լինելով, ինքը կամաւորապէս նրանց կողմը անցաւ։ Թիւրքաց զօրքերի հրամանատար Հաջի-Օսման-Փաշա նոյնը արաւ։ Նա այնպէս կարգադրեց, որ Թիւրքաց զօրքերից թողած դիրքերը ապստամբները իսկոյն գրաւեցին։ Բացի այդ Թիւրքաց զինուորական պաշարները և զէնքերը ուղարկելու ժամանակ փոքրաթիւ պահապան զօրքեր նշանակեց, այնպէս որ ապստամբները յարձակվեցին նրանց վրա և առանց դժուարութեան ձեռք բերին բոլոր զէնքերը և զինուորական պաշարները։ Ցայտնի է նոյնպէս, որ ապստամբութեանը մասնակցում էր գլխաւոր-նահանգապետ Իզետ-փաշա։ Ապստամբները շուտով կը յայտնեն նրան, որ կարող է մնալ Սկուտարիի մէջ, միայն թէ երկրի վարչութեան գործերի մէջ չը խառնվի։ Այժմ կասկածաւոր է, թէ Բ. Դուռը արդեօք կը կարողանայ վերադարձնել իր իշխանութիւնը այդ երկրի մէջ։ Գլխաւոր բոլոր ցեղերը օգնութիւն են հասցնում ապստամբներին, իսկ քրիստոնեաների և մահմեականների մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում։ Ասում են, որ Տուզի շրջականերում 10,000 ապստամբներ կան, որոնք բաւականաչափ զէնքեր, թնդանօթներ և զինուորական պաշարներ ունեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մայիսի։ «Берегъ» լրագիրը հաղորդում է, որ այսօր, մայիսի 14-ին, առաւօտեան չորս ժամին զինուորական դատարանը հետեւեալ վճիռը յայտնեց. Միխայլով և Սաբուրով դատապարտված են մահուան պատժի կախաղանով, Տրոշչենսկուն 20, իսկ Վէյմար և Բերդնիկովին 15 տարվայ տաժանակիր աշխատանքների, Կոլենկինին նոյն ժամանակամիջոցով գործարանների մէջ, Լեվանտոլ 10 տարվայ տաժանակիր աշխատանքների ամրոցների մէջ, Նատանսոն 6 տարվայ տաժանակիր աշխատանքների գործարանների մէջ, Վիտանեվին նոյն պատժի չորս տարով, Մալինովսկուն իրաւունքներից զրկելով և Բուլանովին առանց իրաւունքներից զրկելու բնակեցնել Տոբոլսկայա նահանգը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՋԵՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, կոմ. երեխաների համար Պալմէր, թարգ. օր. Ս. Տէր-Մարկոսեանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵԽ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԶԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւոր հասցէով՝ Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

Թիֆլիսի առևտրական վարչութիւնը յայտնում է Թիֆլիսի պ. պ. առևտրականներին, որ 1) ապրիլի 24-ին նշանակված առևտրական վարչութեան պաշտօնական անձանց ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԸ ԿԱՅՑԱՅԱՆ, որովհետև բաւականաչափ առևտրականներ ներկայ չէին և 2) որ նոյն պաշտօնական անձանց ընտրութիւնները ՆՈՐԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԵՆ ՄԱՅԻՍԻ 18-ին, առաւօտեան 11 ժամին:

2—3

ОСОБА, знающая РУССКІЙ, ФРАНЦУЗСКІЙ, НѢМЕЦКІЙ языки и начало МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на ПОЧТОВОЙ СТАНЦІЙ въ ДАМСКОЙ комнатѣ.

ՄԻ ՏԻԿԻՆ, որ գիտէ ռուսերէն, ֆրանսիերէն, գերմաներէն լեզուները և երաժշտութեան սկիզբները, ցանկանում է ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ տեղ ստանալ: Հասցէն իմանալ ՓՕՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեակում:

3—3

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑՆ, Եղիսաբէթ Յարութիւնեան Սարգսեանցն և Գրիգոր և Աիստիրթ ՍԱՐԳՍԵԱՆՑՆԵՐՆ յաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ առաջինի հարս, երկրորդի որդի և վերջինների քոյր ՆԱՏԱԼԻԱ ԳԻՎԻԵԱՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑՆ ՎԱԽՃԱՆԻԵՑԱԻ: Յուղարկաւորութիւնը հանգուցեալի կը լինի ՇԱԲԱԹ օրը, ամսոյս 17-ին ժամը 9½-ին առաւօտեան իր ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԻՑ ՍԱՂԻ ՎԵՐԱՑ, որտեղ միրօվօի սուդն է 4 բաժնի, ԷՋՄԻԱԾՆԱՑ եկեղեցին, ՀԱԻԼԱԲԱՐ:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բաթենեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բատինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

«ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ, ԵՒ ԸՆԿ.»

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ դնումներին մինչև նոր փոփոխութիւնը վճարում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին 4½%
մինչև պահանջելը 4½%

2) Ժամանակաւոր մուտքերին. 6 ամսով 6%
9 ամսով 6½%
1 տարով 7½%
1½ տարով 8%
2 տարով և աւելի 8½%

3) Մասնաւոր դնումներին առաջին կարգի պայմանեցողներին 9%

Գումարներ տալու ժամանակ վերցնում է
Մի ամսվայ ընթացքում 10%
« շաբաթվայ 9%

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է Լիշ. ԹՈՒՄԱՆՕՎՆԵՐԻ տանը, Ալէքսանդրեան այգու դիմացը և բաց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանդցնելու համար ՀԱՍԱՐԱԿ օրերը առաւօտեան 8—2 ժամը, իսկ ՏՕՆԵՐԻՆ առաւօտեան 8—10 ժամը:

2—3 (2)

ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետաձգութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Դրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՎՍԷՍԵԱՆ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆՑ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել քաքաքային փոստայով, յայտնել իրան թէ ի՞նչ հասցէով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները տարաբերված չեն և նրանց վրա նշանակված չէ հասցէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների տարեկան հարցաքննութիւնները կըսկսուին մայիսի 15-ին և կը շարունակուին մինչև ամսի վերջը, հետևեալ կարգով:

Մայիսի 15 և 16-ին Կուկիու Թանդոյեան օրիորդական ուսումնարանում.
« 17 — Կուկիու Ս. Աստուածածին եկեղեցու ուսումն.
« 19 և 20 Կաթողիկէ Ս. Դէորգ եկեղ. ուսումն.
« 22 — Հալլաբարի Ս. Մինաս եկեղ. Իզմիրեան ուսումն.
« 23 — Զուղուրէթի և Ս. Կարապետ եկեղ. ուսումն.
« 24 — Զորաբաշի և Շամքուեցոց եկեղ. ուսումն.
« 27 և 28 Հալլաբարի Մարիամեան օրիորդ. ուսումն.
« 30 և 31 Զգրաշէնի ուսումնարաններում:

Թեմ. վեր. Գ. Բարխուդարեանց

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ ՀԱՅ ԹԱՏՐՕՆԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

I

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեղ. Գոգոլի, թարգ. Ց. Տէր-Գրիգորեանի

II

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ԽՆԴԻՐՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ՀԱՇՏԱՐԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄՈՏ

Կոմեդիա 3 արար., ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ Ց. Տէր-Գրիգորեանի

Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ:

III

ԶԱՒԵՇՏ

1) Պատկերներ ժողովրդական կեանքից, ԲԺԻՇԿ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ կը պատմէ պ. Ց. Տէր-Գրիգորեան

2) Տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան կերգէ բոմանսներ, ի միջի այլոց «ԳԻՇԵՐԸ ԳՐԵՆԱԴԱՑՈՒՄ» երաժշտութիւն Շիֆֆի:

Տեղերի գինը ՍՈՎՈՐԱԿԱՆ է:

Տոմսակները թէ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ օրը և թէ ՎԱՂՕՐՕՔ կարելի է ստանալ ԱՐԾՐՈՒՆՈՒ թատրոնի կասսայում, ԱՄԵՆԱՑՆ օր առաւօտեան 10—2 և երեկոյեան 6—8 ժամը:

4—5

ՆԻՈՒ-ԷՕՌՔԻ ԶԻՆԳԵՐ

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլակերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համրելու մէկիկ մէկիկ իրենց գերազանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:

Վերոյիշեալ Նիու Լյոռքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս՝ Թիֆլիսի շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Ամամանակի փողոցի Օրպելյանի տունն, Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այլ բնիկ նորբաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինգերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կ տարակուսացուցնեն սեպհական մերոնց լաւութեան անունն:

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուզելու համար, որ կը խրկեմք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պատասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ մեր երեսագիրն է:

Г. Нейдлингеръ. Тифлисъ.
Գ. Նայդլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի:

Խանութի մէջ կարելի է ուղղել խանգարված մեքենաները:

3—3 (2)

Дозволено Цензурою 15 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона